ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 0638-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը,Անդրանիկ Շմավոնի Բարսեղյանի 07.02.2024թ. թիվ 0832 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղի 7-րդ փողոց 1 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով Անդրանիկ Շմավոնի Բարսեղյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արաքս գյուղ 04-016-0021-0026 կադաստրային ծածկագրում գտնվող 1616.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 166,4 քմ ներքին և 193,3 քմ արտաքին մակերեսով, ավտոտնակը՝ 78,5 քմ ներքին և 86,8 քմ արտաքին

մակերեսով, օժանդակ շինությունը՝ 18,3 քմ ներքին և 21,9 քմ արտաքին մակերեսով,հավաքունը՝ 10,8 քմ ներքին և 12,8 քմ արտաքին մակերեսով, խորդանոցը՝ 9,6 քմ ներքին և 11,9 քմ արտաքին մակերեսով,պարիսպը՝ 5,2 քմ մակերեսով, թվով մեկ ինքնակամ բացված դուռը և երկու ինքնակամ բացված պատուհանը ճանաչել օրինական,իսկ ծածկերը համարել ինքնակամ :

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում,Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 138,6 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524,4 ՀՀ դրամ ընդհանուր 72682/ յոթանասուներկու հազար վեց հարյուր ութսուներկու/ և երկու ինքնակամ բացված պատուհանի համար 1748 /մեկ հազար յոթ հարյուր քառասունութ / և մեկ ինքնակամ բացված դռան համար 874 ՀՀ դրամ /ութ հարյուր յոթանասունչորս/, ընդհանուր 75304/յոթանասունհինգ հազար երեք հարյուր չորս/ ՀՀ դրամ օրինկանացման վճար:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արաքս գյուղի Ս.Գրիգորյան փողոց 52 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 20236DCRET:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2024 թ. Մայիսի 14

ք. Արմավիր